ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 31-Ա

Արթիկ համայնք 30 հունիսի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 30-ի թիվ 54-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 60-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
3. «Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության Կանոնադրությունը հաստատելու մասին
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝

Կողմ՝ 8 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 8

Վարդանյան Ոսկան

Հակոբյան Տարոն

Ղուլիջողյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
2020թվականի 30 հունիսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 32-Ն

Արթիկ համայնք 30 հունիսի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, 90-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 6-րդ մասերով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 60-Ն որոշման մեջ բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները

1) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժնի <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> (4239) հոդվածում գրված <<600000 վեց հարյուր հազար>> թիվը և բառերը փոխարինել <<900000 ինը հարյուր հազար >> թվով և բառերով:
2) ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ բաժնի <<Պահուստային միջոցներ>> (4891) հոդվածում գրված <<74648880 յոթանասունչորս միլիոն վեց հարյուր քառասունութ հազար ութ հարյուր ութանասուն>> թիվը և բառերը փոխարինել <<74348880 յոթանասունչորս միլիոն երեք հարյուր քառասունութ հազար ութ հարյուր ութանասուն>> թվով և բառերով:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝

Կողմ՝ 8 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 8

Վարդանյան Ոսկան

Հակոբյան Տարոն

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
2020թվականի 30 հունիսի

Վարագյան Մեսրոպ

Նիկողոսյան Արմեն

Աբրահամյան Ալեքսան

Հակոբյան Հարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

2020թվականի 30 հունիսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 33-Ն

Արթիկ համայնք 30 հունիսի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԱՌԱՆՁԻՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 29-ի N 1/փ-55 դրական եզրակացությունը, (կից ներկայացվում է) և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14.3 հոդվածի 5-րդ, 12-րդ, 14-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 6-րդ ենթակետով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասերի նպատակային և/կամ գործառնական նշանակության փոփոխությունը, որով նախատեսվում է համայնքի վարչական սահմաններում (Շիրակի մարզ ք. Արթիկ Շիրակացի թաղամաս) գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 1.03799 հա մակերեսով 08-002-0001 ծածկագրով, 0.14631հա մակերեսով 08-002-0002 ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերը և 0.05935հա մակերեսով, 08-002-0154 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության այլ հողերը փոփոխել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողի՝ (նախատեսվում է մինչև 0.6 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում) գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու համար:

2.Կատարված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և տարեկան ընթացիկ հաշվառման հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝

Կողմ՝ 8 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 8

Վարդանյան Ոսկան

Հակոբյան Տարոն

Ղուլիջողյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 55
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և/կամ գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
1.03799 հա մակերեսով, 08-002-0001- ծածկագրով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր 0.14631 հա մակերեսով, 08-002-0002- ծածկագրով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր 0.05935 հա մակերեսով, 08-002-0154- ծածկագրով՝ գյուղատնտեսական նշանակության այլ հողեր	1.03799 հա մակերեսով, 08-002-0001- ծածկագրով, 0.14631 հա մակերեսով, 08-002-0002- ծածկագրով, 0.05935 հա մակերեսով, 08-002-0154- ծածկագրով՝ էներգետիկայի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Միաժամանակ անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրված կարծիքը՝ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածով սահմանված պահանջները ապահովելու վերաբերյալ:

4. Արթիկի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ, Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող Ա. Ղուլարյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Դավթյան

ՀՈՂԱՄԱՍԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

Մ 1:10000

Հյուսիս



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 34-Ն

Արթիկ համայնք 30 հունիսի 2020 թվական

«ԱՐԹԻԿԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել «Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝

Կողմ՝ 8 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 8

Վարդանյան Ոսկան		Հակոբյան Տարոն	
Ղուլիջողյան Ռաֆիկ		Մկրտչյան Մուշեղ	
Վարագյան Մեսրոպ		Աբրահամյան Ալեքսան	
Նիկողոսյան Արմեն		Հակոբյան Հարություն	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2020թվականի 30 հունիսի